# ԱՆԻԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

—

*Արձանագրութիւն երկրորդ*

1880 ամի 20ն Նոյեմբերի Անւոյ եկեղեցեաց եւ աւերակաց Հոգաբարձութիւնը նիստ կազմելով որոշեց՝

Ա.) Գործավարութեան եւ յարաբերութեանց կանոնաւորութեան համար իւր միջից ընտրել նախագահ, եւ որովհետեւ Հոգաբ. 'ի 6-էն Հոկ. 1880 ամի համարաւ 25 ստացած էր Կարսայ Սրբազանի առաջնորդից մի գրութիւն, որով նա իւր ցանկութիւնն էր յայտնում նախագահի պաշտօնի մէջ տեսնել Արժ. Տէր-Մինաս հօրը, Հոգաբարձութիւնս համաձայնելով Սրբազանի ցանկութեանը, ընտրեց իւր միջից նախագահ Տէր-Մինաս քահանային.

Բ) Հոգաբարձութեան ելեւմտից կանոնագրութեան համար իւր միջից գանձապահ ընտրեց Մհի Գէորգ աղայ Բաբայեանցին, ինչպէս եւ որոշեց իւրաքանչիւր տարուայ համար ունենալ ելից եւ մտից մատեան, մուտքը եւ ծախսը արձանագրելու համար.

Գ) Հոգաբարձութեան գրաւոր յարաբերութեանց եւ նիստերը արձանագրելու համար իւր միջից քարտուղարութեան պաշտօնի համար ընտրեց պ. Աբիսողոմ Յովհաննիսեանցին.

Այս Հոգաբարձութիւնը Տէր-Մինաս հօր նախագահութեամբ դիմելով իւր պարտականութեան կատարման մասին խորհելուն, նախ եւ յառաջ ամենից կարեւոր համարեց Անւոյ մէջ միաբանութիւն կազմելու մասին հոգալ, եւ այդ նպատակը իրագործելու համար, բայց միեւնոյն ժամանակ 'ի նկատի ունենալով իւր դրամական սուղ միջոցները, Հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարեց առ ժամանակ, եթէ ոչ վանահայր, գէթ վանահօր փոխանորդ ունենալ, որ լինելու է անմիջական կառավարիչ եւ հսկող եկեղեցեաց եւ աւերակաց.

Գալով փոխանորդի անձնաւորութեանը, Հոգաբարձութիւնը այդ մասին արդէն վաղուց մտածած լինելով եւ այս նիստում եւս բոլոր հանգամանքները 'ի նկատի առնելով, որոշեց առաջարկել բարեշնորհ Ներսէս վարդապետ Տիգրանեանցին ընդունել իւր վրայ Անւոյ վանահօր փոխանորդի պաշտօնը եւ պարտականութիւնը, տալով նորան երկու ժապաւինեալ մատեան՝ մինը այցելուաց նուիրատուութիւնները արձանա-

digitised by A.R.A.R.@

գրելու համար, իսկ միւսի մէջ զարդուց եւ անօթեղինաց ցուցակը զե-տեղելու համար։

Միեւնոյն ժամանակ Հոգաբարձութիւնը որոշեց յիշեալ ընտրու-թեան մասին անյապաղ պաշտօնապէս տեղեկացնել Կարսայ Սրբազան Առաջնորդին եւ խնդրել Նրա շուտափոյթ հաստատութիւնը Ներսէս վար-դապետին փոխանորդի պաշտօնի մէջ, տալով նորան հրահանգ կառավա-րութեան եւ կոնդակ ժողովարարութեան միաբանից ս. Նշեան համար։

Հոգաբարձութիւնս որոշեց այդ գրութեան միջոցաւ միանգամայն եւ յայտնել իւր շնորհակալութիւնը Սրբազանին՝ Կոնդակի առթիւ։

Պատճէն 'ի պատճէնոյ

Հրահանգ տուեալ յԱռաջնորդէ Կարուց եւ Բաթումայ Գրիգոր Եպիսկո-պոս Աղուանեանէ՝ Արժանապատիւ Ներսէս վ. Տիգրանեան

1. Անւոյ մէջ միաբանական ուխտ հաստատելու համար, Տիգրան-եան Արժ. Ներսէս վարդապետը մեր կողմանէ փոխանորդ կը նշանակենք եւ սոյն գիրը մեր առաջնորդական կնքով եւ ստորագրութեամբ վաւե-րացուցանելով նմա կու տամք, որոյ գլխաւոր պաշտօն պիտի լինի տեղ-ւոյն հին եւ նոր շէնքեր պահպանել, իւր հետ առնելով առ այժմ հարկ եղած երկու կամ երեք աշխարհական գործակալներ որոնցով 'ի գործ պիտի դնէ իւր պաշտօնը ըստ հետեւեալ հրահանգաց, եւ վանական կա-նոնաց համաձայն Աստուածպաշտութեան օրհներգութիւն պիտի կա-տարէ արդէն պատրաստուած Սուրբ Լուսաւորիչ եկեղեցում 'ի հոգեւոր մխիթարութեան միաբանութեան եւ երթեւեկ ուխտաւորաց։

2. Մի ժապաւինեալ տոմար վաւերացուցանելով մեր իսկական ստո-րագրութեամբն եւ կնքով տուինք յիշեալ Ներսէս վարդապետին, (մինչեւ որ ս. Սինօդից նոր տոմար ստանամք) որոյ մէջ թուահամարով պիտի արձա-նագրէ տեղական հասոյթներ, ուխտաւորաց դրամական նուէրներ, զարդեր, անօթեղէններ, վանքի երկրագործական գործիքներ, անասնեղէններ եւ այլն. — նոյնպէս ժողովարարութենէ գոյացեալ արդիւնքներ եւ այլ ծախսեր ըստ ԺԲ-րդ յօդուածոյ հրահանգին Սրբոյ Սինօդին։

3. Անւոյ միաբանութիւն առանց նախապէս գրաւոր արտօնութեան Կարուց առաջնորդին իրաւունք չունի ինքնագլուխ ժողովարարութեան իջնել ըստ ԺԷ-րդ յօդուածոյ Սրբոյ Սինօդին։

4. Եթէ հարկ լինի Անւոյ վանական ուխտի վանահօր որեւիցէ ան-դամոյ միաբանութեան Կարուց վիճակին յայլ վիճակ գնալ, պարտաւոր

digitised by A.R.A.R.@

է Կարուց առաջնորդի միջնորդութեան դիմել. որպէսզի առաջնորդն այդ մասին լուծումն առնայ Սինոդից ըստ ԺԶ-րդ յօդուածոյ Սինոդին։

5. Անւոյ վանահայրն եւ միաբանութեան 'ի պէտս շինութեան եւ իւրեանց ապրուստին, իրաւունք չունին ինքնագլուխ պարտքով. փող վերցնել, պարտամուրհակ տալ, եւ կամ Անւոյ կալուածներն 'ի գրաւ դնել. առանց վերահասութեան եւ գիտութեան Կարուց Առաջնորդին եւ Անւոյ Հոգաբարձական ընկերութեան. այս կանոնի հակառակ գործողներ պարտատէր կը մնան իւրեանց պարտքը ինքեանք վճարելու։ Ուստի եւ ազատ են Անւոյ կալուածներ այդ օրինակ վտանգներէ։

6. Որ եւ իցէ քաղաքէ կամ գիւղի եղած ժողովարարութեան արդիւնքը նոյն տեղւոյ մէջ պիտի արձանագրուի 'ի վաւերացուցեալ հաշուետումարի, եւ տեղական քահանային. տանուտէրն եւ երեցփոխանն իւրեանց կնքով կամ ստորագրութեամբ պիտի վաւերացուցանեն այդ արդիւնքը։

7. Ուխտաւորաց նուէրներ նուիրողաց ձեռքով պիտի արձանագրուին 'ի ժապաւինեալ տոմարին։

8. Անւոյ որ եւ իցէ ելեւմտական գործերը միաբանական ժողովոյ վերահասութեամբ պիտի լինին եւ արձանագրուին։

9. Եթէ հարկ լինի Անւոյ կալուածներ 'ի վարձու տալ, հաստատելիք պայմանագիրն Կարուց առաջնորդն պիտի վաւերացուցանէ ըստ վաղեմի սովորութեան, ապահովութեան համար։

10. Անւոյ միաբանութիւնը իւր ապրուստ պիտի հայթհայթէ տեղւոյն շարժական եւ անշարժ կալուածներէն ըստ ԺԷ-րդ յօդուածոյ Սինոդին։

Անւոյ հոգաբարձական ժողովոյ Անդամք են. — Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսն Աղաւնեան նախագահ, Արժ. Տէրն Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան, Մեծ. Մեծ. պ. պ. Աբիսողոմ Ցովհաննէսեան, Մ. Գէորգ Բարայեան, Ցարութիւն Ցովհանջանեան, Հաճիպապ Իսպիրեան, Աստուր Իսահակեան, ուսուց Մանուկ Խումարեան. Ճալա գիւղացի Գէորգ Պետրոսեան եւ Կարմիր-Վանք գիւղացի Խաչատուր Ենկոյեան։

11. Անւոյ միաբանութիւնը պիտի մշակէ Անւոյ Ծաղկաձորէն մինչեւ ձորամիջի Կարմիր-Վանքը. թէ ձորի եւ թէ նորա վերեւ եղած հողերը, մինչեւ Հովուի-եկեղեցին, առանց Խօշավանքի հողերուն ձեռնամուխ լինելու, որ կ'բաժանէ Խօշավանքէն եկած ճանապարհը մինչեւ Անի գիւղ. եւ այդ գիւղի ջրէն մասն պիտի ունենայ երկրագործական պիտոյից համար։

12. Անւոյ շրջագայից մէջ աշխարհականաց բնակութիւն հաստատելու համար Կարուց առաջնորդին եւ Անւոյ հոգաբարձական ընկերութեան խորհրդակցութեամբն եւ հնարանօք պիտի լինի։

digitised by A.R.A.R.@

13. Քանի որ միաբանական ուխտի մէջ ժողով հաստատուած չէ, միաբանական անդամ ընտրելն եւ ընդունելն Կարուց առաջնորդի հաւանութեան կ'մնայ.

14. Կարուց Առաջնորդն եւ Անւոյ հոգաբարձական ընկերութիւն տեղւոյն միաբանութեան հետ ջան 'ի գործ պիտի դնեն մի վանական ուսումնարան բանալ Անւոյ մէջ, շրջակայ ազգայնոց որդիները ուսուցանել քահանայացու եւ վարժապետացու հասուցանելու համար.

15. Անւոյ միաբանութեան տարեկան ել եւ մուտ հաշիւները կ'տեսնեն Կարուց Առաջնորդն եւ հոգաբարձական ընկերութիւն, ու տարուէ տարի վաւերացուցանելէն զկնի, հրապարակական յայտարարութեամբ կ'ապահովացուցանեն զազգայինս.

16. Անւոյ միաբանութիւնը ամէն գործառնութեանց մէջ պատասխանատու է Կարուց Առաջնորդին ըստ ԺԳ-րդ յօդուածոյ Սինօդին.

17. Կարուց Առաջնորդ 'ի հարկաւոր դէպս յատուկ վանահայր կը նշանակէ Անւոյ համար [ըստ] Դ-րդ յօդուածոյ Սինօդին.

Սոյն հրահանգ Կարուց Առաջնորդէն տրուեցաւ Անւոյ փոխանորդ Տիգրանեան Արժ. Ներսէս վարդապետին, առ ժամանակ մի այսու իւր պաշտօն վարելու մինչեւ որ Անւոյ հոգաբարձական ընկերութիւն միջոց ունենայ Կարուց Առաջնորդին հետ տեսնուել եւ նորա խորհրդակցութեամբ աւելի եւս մշակել զայն, որ պիտի մատուցանուի Վեհ. Հայրապետին ամենայն Հայոց 'ի վաւերացումն.

'Ի 8 Նոյեմբերի 1880 ամի, յԱռաջնորդարանն Հայոց 'ի Կարս.

---

Արձանագրութիւն երրորդ

1880 ամի 20 դեկտ. Անւոյ եկեղեցեաց եւ աւերակաց հոգաբարձութիւնը նախագահութեամբ Արժ. Մինաս քահանայի Տէր-Գէորգեան նիստ կազմեց որոշեց

ա. կարդացուեցաւ մի գրութիւն Կարսայ Սրբազան Առաջնորդից, որով նորին Սրբազնութիւնը յայտնում էր իւր հաճութիւնը հաստատելու համաձայն առաջարկութեան հոգաբարձութեանս, Ներսէս վարդապետ Տիգրանեանցին Անւոյ վանահօր փոխանորդի պաշտօնի մէջ, առաջարկելով հոգաբարձութեանս Ներսէս վարդապետին ուղարկել Կարս պէտք եղած հրահանգները եւ պատուէրները եւ պաշտօնական հաստատութեան գրութիւնը անձամբ ստանալու.

բ. Այդ հիման վրայ հոգաբարձութիւնս որոշեց, արդէն իսկ տալ բարեշնորհ Ներսէս վարդապետին մի գրութիւն, ընդունելով նորան

digitised by A.R.A.R.@

պաշտօնական ներկայացուցիչ Հոգաբարձութեան եւ վերահսկող Անւոյ եկեղեցեաց, կալուածների եւ աւերակաց պաշտպանութեան եւ պահպանութեան համար. միանգամայն եւ մասնագէտ լինելով այն ամենակարեւոր կէտերի վրայ, որոց վրայ պէտք է անմիջապէս կենդրոնանայ փոխանորդի ուշադրութիւնը։

—

Արձանագրութիւն Չորրորդ

1881 ամի փետրուար 8-ին, Հոգաբարձութիւն եկեղեցեաց եւ աւերակաց Անւոյ նախագահութեամբ Արժ. Մինաս քահանայի Տէր-Պետրոսեան նիստ կազմելով, որոշեց.

ա. Որովհետեւ Հոգաբարձութիւնս առ այժմ չունի ոչինչ նիւթական միջոցի դիւրութիւն, ուստի դիմել հրաւիրաթերթերով ազգային նշանաւոր անհատներից մի քանիսին, որոնց վրայ մեծ յոյս ունէր, խնդրելով օգնել նիւթապէս Հոգաբարձութեանս, որպէսզի ինքն եւս կարող լինի իւր վրայ դրուած ծանր պարտականութիւնները գէթ մասամբ կատարել։ Այդ իսկ հիման վրայ որոշուեցաւ գործակալներ նշանակել զանազան քաղաքներում եւ հրաւիրաթերթեր տպագրել տալով, ուղարկել նոցա յիշեալ նպատակին իրագործելու համար. իսկ հրաւիրաթերթերից մինը որոշուեցաւ կցել Հոգաբարձութեան գործերի հետ։

բ. Հոգաբարձութիւնս ՚ի նկատի ունենալով Արեւմտեան Շիրակայ գործակալի հետ ունեցած յարաբերութեան հանգամանքները, որոշեց հաղորդել նորին բարեկրօնութեան՝ ճանաչել այսուհետեւ բարեջնորհ Ներսէս վարդապետ Տիգրանեանցին ներկայացուցիչ Հոգաբարձութեանս. իսկ հարկաւոր յարաբերութիւն պաշտօնապէս պահել Հոգաբարձութեանս հետ այս կամ այն գործի առթիւ, որ վերաբերում էին Անւոյ եկեղեցեաց եւ աւերակաց։

—

Հոգաբարձութիւն
եկեղեցեաց եւ աւերակաց
Անւոյ                Մեծապատիւ
«    »    188 ամի
Ալէքսանդրապօլ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսը դրած է մեզ վրայ մի ծանր, բայց քաղցր պարտք. Բագրատունեաց Անի Մայրաքաղաքի աւե-

digitised by A.R.A.R.@

րակների մէջ եկեղեցեաց համար մի միաբանութիւն հաստատել աւերիչ ձեռքերից նորա ամենայն հնութեանց եւ Սրբութեանց ամեն մի ցանկալի յիշատակարանները պահպանելու համար, որոնք ցոյց են տալիս Հայի փառաւոր մի անցեալը։ Այժմս այդ միաբանութիւնը մասամբ հաստատուած է այնտեղ, ուր, հինգ հարիւր տարի սաղմոսների ձայնը լռելուց յետոյ, լսւում է զանգակների ղօղանջիւնը եւ սաղմոսների մրմունջը։ Հոգաբարձութիւնս «Մեղու»ի 61-րդ համարում հրատարակած հրաւէրքում ցոյց տուեց իւր ապագայ գործունէութեան ծրագիրը, սակայն՝ գործի վսեմութիւնը եւ զգալի պահանջը աչքի առաջ ունենալով՝ պատիւ է համարում սրանով գրել Ձեր Մեծապատուութեանը՝ տեղւոյդ շրջանում օգնութեան միտք արծարծել, մանաւանդ Մայր եկեղեցւոյ նորոգութեան համար, որ Անւոյ հրաշալիքներից մինն է, որ մի գուցէ անհոգութեան երեսից, այդ հիանալի յիշատակարանն էլ կործանուի։ Հոգաբարձութիւնս պարտք է համարում ստացած գումարների մասին եւ ծախուց հաշիւը հրատարակել 'ի միամտութիւն նուիրատուներին։

Նախագահ

Հոգաբարձու ք }

| Համար | Ամսաթիւ | Ցուցակ նուիրատուութեան յօգուտ աւերակաց եւ եկեղեցեաց Անւոյ | Ռուբլի | Կոպեկ | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

Paris — Imprimeur-Gérant : BASMADJIAN, 9, rue Gazan.

digitised by A.R.A.R.@

անուամբք անուանիմ
անուանակիր անուանն առնեմ
անուանեմ անուանակցութեամբ
անուանեմ յանուն՝ զանուն՝ անուանս
անուանեմ զԱնունն. հայհոյել. Տ. հայհոյեմ.
անուանեմ զանուն Տեառն. » »
անուանեմ ըստ անուան
անուանեմ ըստ անուանց զանուն
անուանիմ յանուն՝ յանուանէ
անպարտ առնեմ զպարտաւորն
անպարտ եմ եւ չեմ պարտական. բնաւ պարտք չունենալ.
անստացուած կենդաղ ստանամ. Տ. ստանամ.
անց եւ անց առնեմ. վեր ի վերոյ նայիլ. Տ. 'ի հարեւանցի.
անց եւ անցս առնեմ » » » »
անցանեմ զանցանեմ. զերազանցել.
անցուցանեմ զանցուցանեմ »
անցս անցուցանեմ
անքաղաք զքաղաքն առնեմ. աւերակ դարձընել.
անօգնականին օգնեմ. Տ. օգնական.
անօրինիմ անօրէնութիւնս. Տ. ամպարշտիմ.
անօրինիմ յաստուածեղէն օրէնսն
անօրինիմ եւ անօրինեցուցանեմ
աշխատեմ զաշխատիչն իմ
աշխատեցուցանեմ աշխատութեամբ մեծաւ.
աշխատիմ զբարուոք աշխատութիւն. Տ. Ջան. վաստակեմ.
աշխատիմ յաշխատութեան. » » »
աշխատութեամբ աշխատ լինիմ. » » »
աշխատութիւն աշխատիմ. » » »
աշխարհանօք աշխարեմ. Տ. 'ի ձայն կոծեմ, ողբամ.
աշխարեմ աշխար. » » » »
ապախտաւոր լինիմ ընդ երախտաւորն. ապերախտ ըլլալ. Տ. երախտեացն.
ապախտաւորութիւն երախտաւորին հատուցանեմ. » » »
ապականեմ զապականիչս
ապականիմ ապականութեամբ
ապաւինիմ առ ապաւինելին
ապերախտին երախտաւոր լինիմ
ապխտեմ ապուխտս ապուխտս
առ աչս աչառեմ. ակնառութիւն ընել.
առ առաքիչն առաքեմ
առ միմեանս միաւորիմ
առակ խայտառակ լինիմ. Տ. ծանակութեամբ, ձաղանօք.

առակաւ առակեմ
առակեմ զառակ՝ առակս
առանձին ընդ անձին խօսիմ
առաջնորդեմ զառաջնորդեալս
առաւել եւս առաւելում. աւելի շատնալ.
առաւելով առաւելում. »
առաւելում առաւել քան. »
առաւել քան զանառակ որդին անառակիմ
առաւել քան զպոռնիկն պոռնկիմ. Տ. պոռնկիմ.
առաքեալս առաքեմ
առաքեմ զառաքեալսն
առաքինանամ զառաքինութիւնսն. Տ. զերկնից ընթանամ.
առկայանամ 'ի կայանս. տեղաւորուիլ.
առնեմ անզօր 'ի զօրութենէ. տկարացնել.
առնում առիւ
առնում զառ եւ զապուռ. աւար ընել. Տ. աւարեմ, կողոպտեմ.
առնում զառն. » » »
առնում զառած. մարգարէանալ.
առնում յաւարի զաւարառուս. Տ. կողոպտեմ, զկողոպտիչս յաւարի.
ասեմ զասացեալսն
աստէն եմ եւ յաստիս. հոս երկրիս վրայ ապրիլ.
աստուածաբանեմ վասն բանին
ատելութիւն կատարեալ ատեմ
ատեմ ատելութեամբ զատելութեան արժանաւորսն
ատեմ ատելութիւն մեծ յոյժ
ատեմ զատելութիւն
ատեմ զատելիս՝ զատեցողսն
արագահաս հասանեմ
արարածս առնեմ
արարս առնեմ. Տ. գործեմ, ներգործեմ.
արբենամ արբեցութիւն՝ զարբեցութիւն
արբեցուցանեմ արբեցութեամբ
արբուցանեմ արբուցումն ջուր
արդարացուցանեմ զարդարն
արդարացուցանեմ զարդարութիւնս
արդարութեամբ օրինացն արդարանամ
արթուն եւ զուարթուն լինիմ կամ. Տ. զարթնում, զուարթութեամբ.
արթուն լինիմ զուարթ կամ. » » »
արժանացուցանեմ զանարժանն. Տ. արժանի.
արժանեմ զարժանս. վաւերական կնիք դնել. Տ. կնքեմ.
արժանի առնեմ զանարժանն. Տ. արժանացուցանեմ.
արժանի առնեմ զանարժանութիւն

արհամարհանօք արհամարհեմ. Տ. անարգանս նախատինս.
արհամարհեմ զարհամարհանս. » » »
արհամարհեմ զարհամարհիչս
արհամարհիմ յարհամարհէ
արձակեմ համարձակեմ
արձակեմ յարձակումն. ագաս թռչուն.
արմատաքի խլեմ զչար արմատս
արուեստի արուեստական լինիմ
արտասուալից լինիմ արտասուօք. Տ. զլալ, լալիւն, ողբամ.
արտասուօք արտասուեմ. » » » »
աւանդիմ զաւանդիմ. իմֆմիրմէ յանձնեց աւանդը.
աւանդս աւանդեմ
աւարիմ եւ աւար հարկանեմ. Տ. առնում. կողոպտեմ.
աւարեմ զաւար. » » »
աւետարանեմ ընդ աւետարանիչսն
աւետիս աւետարանեմ
աւերածով աւերեմ
աւերիմ զվերջին աւերածն
աքսոսեմ ոտիւք կից զարնել.
Բազմանուն անուանիմ
բաժանեմ բաժին՝ զբաժին՝ ի բաժինս՝ բաժինս.
բաժանեմ ըստ բաժանմանց
բամբասանս բամբասեմ. Տ. բանալաճառ.
բամբասանօք բամբասեմ. » »
բանակաւ բանակիմ
բանակիմ արտաքոյ բանակի
բանակիմ ի բանակի
բանալաճառ լինիմ 'ի բամբասել. Տ. բամբասանս.
բանիւք բամբասեմ. » »
բառնամ վերըմբարձ. վեր վերցուած տարուիլ.
բարբանջս բարբանջեմ
բարբառիմ 'ի բարբառ՝ զբարբառ. Տ. խօսս. ճառեմ.
բարբառիմ բարբառս » » »
բարբառով բարբառիմ. » » »
բարեզարդութեամբ զարդարիմ
բարեկամ լինիմ բարեկամաց
բարենախանձ լինիմ 'ի նախանձն. Տ. նախանձիմ.
բարեչէն չինիմ
բարի առնեմ բարեաց
բարի առնեմ բարեկամին՝ բարեպաշտին.

բարի առնեմ բարերարայ
բարկանամ բարկութիւն մեծ
բարկանամ 'ի սաստկութիւն բարկութեան. Տ. սրտմտեմ, ցասնում.
բարկանամ յոյժ բարկութեամբ մեծաւ. » » «
բարկութեամբ մեծաւ բարկանամ. » » »
բարկութեամբ բարկացուցանեմ. Տ. զայրացութեամբք.
բարձրագոչ ձայնիւ գոչեմ. Տ. աղաղակեմ, պոչեմ, ձայնեմ.
բարձրանամ ի բարձունս. Տ. համբառնամ, 'ի վեր վերանամ.
բարձրանամ 'ի բարձրութիւն բարձանց » »
բարձրացուցանեմ զաւարապարտուց բարձրութիւն
բարձրացուցանեմ ի բարձունս
բարձրացուցանեմ ի բարձրութիւն
բաւեմ եւ լինիմ բաւական
բեկանեմ ի բեկումն մեծ. Տ. կրկին բեկմամբ.
բեկմամբ մեծաւ բեկանիմ. կտոր բրդուճ ըլլալ.
բեկումն մեծ բեկանիմ. » » »
բերել համբերութեամբ
բերս բերեմ
բեւեռեմ բեւեռօք
բեւեռեմ իբրեւ զբեւեռ
բեւեռօքն բեւեռիմ. Տ. ընդ բեւեռս.
բժշկիմ ի բժշկէ
բխեմ բխումն՝ զբխումն՝ զբխմունս. Տ. յորդաբուխ.
բխեցուցանեմ աղբիւր յորդաբուխ
բնակեմ զբնակութիւն. Տ. դադարեմ.
բոյս բուսուցանեմ
բուժեմ յանբժշկական ախտիցն
բուծանեմ զսեղանաբոյծս. Տ. կերակրեմ.
բռեմ բռով. պատը ճերմակցնել.
բռնադատեմ բռնութեամբ
բռնադատեմ զբռնաւորն
բռնադատիմ ի բռնութենէ
բռնաչարեմ եւ բռնադատեմ
բռնութեամբ բռնադատեմ
Գայթակղանս գայթակղեմ. սխալիլ իյնալ.
գայթակղիմ գայթակղութեամբ. » »
գայթիմ եւ գայթակղիմ. » »
գանձաւոր լինիմ գանձուց
գանձեմ գանձ՝ զգանձ՝ գանձս՝ զգանձս
գանձս բարիս գանձեմ

գեղապանծ լինիմ 'ի գեղ. շատ աղուոր ըլլալ.
գեղեցկանամ գեղեցկութեամբ. » »
գեղով գեղեցկանամ. » »
գեղեցկապէս գեղապարեմ ընդ պարս. Տ. կաքաւ. պար.
գետահոս հոսիմ
գերեաց գերեդարձ առնել. գերիներն ես դարձնել.
գերեդարձ առնեմ գերութեան. » »
գերեմ գերութիւն՝ զգերութիւն
գերեմ զգերեալսն
գերեմ զգերի
գերեմ չգերիչն՝ զգերիչսն
գերեմ ի չար գերողէն եւ 'ի չարաչար գերութենէն
գերիմ զվախճանեալ գերութիւն
գթութեամբ գթամ. Տ. ողորմիմ.
գիտակ առնեմ զանգէտ ոք
գիտեմ զանգէտսն. Տ. անհասիցն.
գիտեմ զգիտութիւն
գիտութեամբ՝ գիտութիւն գիտեմ
գիտութիւնս ինչ գիտեմ
գիւտս գտանեմ. Տ. հայթայթանս, հնարիմ, պաճարս.
գլխիվայր գլխարկեմ. Տ. 'ի կոր.
գլորիմ զաւանց բժշկութեան գլորումն
գնամ երից աւուրց գնաց ճանապարհի
գնամ ընդ խառնագնացս. գէշ վարք ունենալ.
գնամ ըստ գնացս. Տ. զընթացս, ընթանամ. ըստ գնացից.
գնացիւք գնամ. » » » »
գնացս գնամ. » » » »
գնեմ տունս բազմագինս
գնիւ՝ գնոյ՝ գնով՝ գնոց գնիմ
գողակից լինիմ գողոց
գողանամ զգողն
գողութեամբ գողանամ
գոյացուցանեմ յանգոյից. Տ. զանգոյսն, զանինչսն, զոչ գոյսն, զչգոյսն,
'ի չգոյէ, յոչնչէ.
գոչեմ գոչիւն մեծ յոյժ. Տ. աղաղակեմ, բարձրագոչ, ձայն.
գոչեմ գոչմամբ. » » . » »
գոչիւն գոչեմ. » » » »
գովեմ զգովողսն
գործ անկուածոյ գործեմ. Տ. անկանեմ, հիւսեմ.
գործակալ լինիմ 'ի գործս

գործակից գործոյ լինիմ
գործեմ գործ՝ զգործ՝ գործս՝ զգործս՝ գործովք. Տ. արարս, ներգործեմ.
գործեմ զգործ նաւագործութեան
գործեմ զգործուած
գործեմ զձեռագործ
գործեմ ընդ գործաւորսն զգործ
գործեմ ըստ գործոյ՝ ըստ գործոց
գործեմ ըստ գործուածոյ
գործեմ կուռս ձեռագործս
գումարեմ գումարտակ. Տ. զօրաժողով. խմբեմ.
գումարեմ զգումարութիւնս. » »
գումարիմ 'ի գումար. Տ. ժողովիմ.
գրաւեմ գրաւ՝ զգրաւ
գրգանօք լրգիմ. փայփայուել.
գրգիմ 'ի գրգանս. »
գրեմ 'ի գիր՝ գիր՝ զգիր՝ 'ի գրի՝ գրով
գրեմ 'ի գիրս՝ գիրս՝ զգիրս. Տ. 'ի գիրս.
գրեմ ի նշանագիրս. » »
գրեմ գրչաւ. փոխագրել.
գրեմ 'ի գիր որդեգրութեանս. Տ. յորդեգիրս.
գրեմ ոսկեգիր գրով
գրիմ յաշխարհագրի
գօտեւորիմ գօտի՝ գօտիս
Դադարեմ 'ի դադարս. Տ. բնակեմ.
դառնութեամբ դառնանամ
դասակարգեմ 'ի դասս
դասակից լինիմ դասուց
դասաւորեմ 'ի դասու՝ 'ի դասս
դասաւորիմ ընդ դասսն
դասեմ 'ի դասս
դատապարտեմ զանպարտն
դատաստան՝ դատաստանաւ դատիմ
դատաստանս՝ դատաստանօք դատիմ
դատաստանօք դատապարտիմ
դատեմ եւ դատապարտեմ
դատեմ զդատաստանս
դատեմ ըստ դատաստանաց
դատիմ զդատապարտողն
դատիմ զդատաւորն
դարձեալ դառնամ

դարձեալ դարձուցանեմ զբանս. ըսածը նորէն փոխել.
դարձուցանեմ զդարձ. ետ դարձընել.
դարձուցանեմ զդարձուածս. »
դարմանեմ զդարմանս. Տ. հոգամ.
դարմանօք դարմանիմ
դաւանիմ զբարիոք դաւանութիւն. Տ. խոստովանիմ, վկայեմ.
դաւանիմ զբարւոք դաւանութիւն. » »
դեղեմ դեղօք. բուժաւորել.
դէմ եդեալ տարադէմ գնամ
դժուարածին լինիմ ի ծննդեան
դժուարանամ եւ դժնէանամ
դժուարափուտ եւ դժուարապականելի լինիմ
դիմագրաւ դիմեմ
դիտեմ զդիտաւորութիւն. դիտողի պէս դիտել.
դիտեմ դիտանոց
դիւթեմ դիւթութիւն. Տ. ըղձութիւնս, թովչութիւնս, կախարդեմ, հարցուկս, հմայեմ, յուռութս.
դիւթութիւնս դիւթեմ. » » » »
դիւրեմ զդիւրութիւն. դիւրինցընել.
դրոշմիմ 'ի դրոշմն. կնքուիլ.
դրօշեմ զդրօշս. Տ. քանդակ.
Եղեւել՝ եղեւեղս առնեմ. զեռազանցել ուզել.
երազ յերազիմ. Տ. տեսիլ.
երազովք երազիմ՝ յերազիմ. »
երազս յերազիմ. »
երախտաւորի հատուցանեմ երախտիս. երախտագէտ ըլլալ.
երախտեաց երախտիս դարձուցանեմ. » »
երախտեացն ապախտիս հատուցանեմ. ապերախտ գտնուիլ. Տ. ապախտաւոր.
երամիցն առնեմ երամակից
երանիմ երանութեամբ. Տ. յերանութիւնս.
երաշխեօք երաշխաւորեմ
երգակցեմ զերգն. մէկտեղ երգել.
երգեմ զերգ՝ երգ՝ զերգս՝ երգս. Տ. նուագեմ.
երգեմ օրհներգութիւնս. Տ. զերգ.
երդմամբ երդնում
երդմնեցուցանեմ զերդումն՝ երդմամբ
երդնում եւ երդմնազանց լինիմ
երդնում յերդնումն՝ զերդումն՝ երդումն՝ յերդմունս՝ երդմունս :
երդումն երդնում
երկայնիմ յերկայնութեան

երկեկից լինիլ կեանս կեամ. երկակեցաղ ըլլալ.
երկիր պագանեմ յերկիր. Տ. երկրպագութեամբ.
երկիր պագանեմ 'ի վերայ երկրի. »
երկմիտ եւ երկբայ լինիմ. երկբայիլ. Տ. վարանական, կասկածանս.
երկմտիմ ի միտս. » » » »
երկնաբարձ ամբառնամ. երկինք եղնել.
երկնեմ զերկունս. Տ. երկունս.
երկնչիմ երկիւղ մեծ. Տ. ահաբեկիմ.
երկնչիմ երկիւղ յոյժ. »
երկնչիմ զերկիւղ յերկիւղէ. »
երկունս երկնեմ. Տ. երկնեմ.
երկրպագութեամբ երկիր պագանեմ. Տ. երկիր.
եփեմ եփոյ. կերակուր մ'եփել.
եօթներորդեմ եօթներորդս. չաշխատել շաբաթ օրուան պէս.
Զախտ հիւանդութեան ախտանամ. Տ. ախտանամ, հիւանդանամ.
զայրացութեամբք զայրացուցանեմ. Տ. բարկութեամբք.
զայրելեան այրեմ. Տ. այրեմ, հրկիզեմ.
զանապականն ապականեմ
զանարգլիչն՝ զանարգլիչս անարգեմ
զանարմատսն արմատացուցանեմ
զանբժշկականսն բժշկեմ
զայգոյսն ի գոյ ածեմ. Տ. գոյացուցանեմ. զանինչսն, ի չգոյէ, յոչնչէ.
զանզոյգսն զուգակցեմ
զանիծիչս անիծանեմ
զանինչսն յինչ ածեմ. Տ. զանգոյսն, զոչ գոյսն, զչգոյսն.
զանխառն օրէնս օրէնսդիր լինիմ
զանխառնելին խառնեմ
զանխառնս խառնեմ
զանխուլ կեանս կեամ. քաշուած ապրիլ.
զանհամբերութիւնն 'ի համբերութիւն ածեմ
զանհնարինսն հնարաւոր առնեմ
զանմահ մահն մեռանիմ
զանյայտսն յայտնեմ
զանյարմարսն յարմարեմ
զանյոյս ի յոյս ածեմ. Տ. զյուսահատն, յոյս.
զաննիւթն ի նիւթ յեռեմ. Տ. զանտարրն.
զանշունչն շնչաւորեմ
զանպատեհսն անպատեհիւքն լուծանեմ
զանպատումն պատմեմ
զանպիղծն պղծեմ

զանսերմանս սերմանեմ
զանտարրն տարրացուցանեմ. Տ. զաննիւթն.
զանց առնեմ զանցաւորօքս
զաստուածասէրս սիրեմ
զարբեալսն արբուցանեմ
զարդարանօք զարդարիմ. Տ. զարդարեմ, պաճուճանս.
զարդարեմ զանզարդութիւն
զարդարեմ զանզարդսն
զարդարեմ զարդուք. գեղեցիկ կերպով զարդարել.
զարդարեմ 'ի զարդ' 'ի զարդս. » »
զարդարեմ զարդ' 'ի զարդ' զզարդ. Տ. զարդարանօք, պաճուճանս.
զարդարիմ զարդու' զարդուք. » » »
զարդարիմ ըստ զարդու. » » »
զարթնում եւ զուարթանամ. Տ. արթուն, զուարթութեամբ.
զարմանամ զարմանալիս մեծամեծս. շատ զարմանալ.
զարմանամ զարմանս. » »
զարմանամ զարմացումն մեծ յոյժ. » »
զարմանամ մեծաւ զարմանալեօք. » »
զարմանամ իբրեւ ընդ զարմանալի ոք
զաւետարանն աւետարանեմ
զբաղսն բարեօք յօրինեմ. կարգի կանոնի մտցնել.
զբարեօք պատերազմ պատերազմիմ. Տ. զպատերազմ, մարտնչեմ.
զբարեացն 'ի չարեացն դարձուցանեմ. աղէկը գէշի փոխել.
զգաստանամ զճշմարիտ զգաստութիւնն
զգեղեցիկն ե'ւս գեղեցկագոյն առնեմ
զգենում զգեստ. Տ. ագանելիս.
զգեստ կարճագգեստ զգենում. »
զգեցուցանեմ զգեստ' զգեստս.
զգինս ուժգնեմ. գինը վեր զարնել.
զգործ չարագործութեան գործեմ. Տ. զչարագործսն.
զգուշանամ եւ զգուշացուցանեմ
զգուշութեամբ զգուշանամ
զդատաստանն ընդ դատաւորի դատիմ
զեղբայրսիրութիւն սիրեմ. Տ. սիրեմ.
զեղում հեղում. Տ. հեղում.
զենլիս զենում. Տ. զոհ, 'ի զենլեաց.
զենում զլենլիս » » » »
զենում զենումն մեծ. » » »
զետեղեմ զտեղեաւն. տեղաւորել. Տ. զտեղի.
զետեղիմ ի տեղւոջ. » »

զերգ օրհնութեան երգել. Տ. երգել.
զերկնից առաքինութիւնն առաքինել. Տ. առաքինանալ, ընթանալ.
զինեալ զինուք
զինել զինու. Տ. սպառազինել.
զինուորել զբարւոք զինուորութիւն
զինուորել զգեղեցիկ զինուորութիւն
զինուորել զինուք
զինուորել ընդ զինուորութեամբ
զինուորել 'ի զինուորութիւն՝ 'ի զինուորութեան
զիրաւունս խրատացուցանել. Տ. խրատացուցանել.
զլալ հարկանել 'ի լալեն մեծ. Տ. արտասուալից, լալեն.
զլալեն՝ զլալիւնս լալ » » »
զկեանս մուրողութեան կեալ. մուրացկանի պէս ապրիլ.
զկէս յանցանաց յանցանել
զկին ուրուք առնուլ կնութեան
զհետոց զհետ երթալ. հետեւիլ մէկուն մը.
զհրապուրիչն հրապուրել
զճգանս ճգնել. Տ. ճգնել.
զմահ չարամահ մեռանել
զմերկան մերկանալ. աղքատները կողոպտել. Տ. մերկացուցանել.
զմոյն ամոյն առնել. Տ. ամժղունել.
զմոյնան ի մոնանութիւն փոխել. » »
զմասալից լնուլ. գինուել.
զյուսահատն 'ի յոյս ածել. Տ. զանյոյսս, յոյս.
զոհել զոհ՝ զզոհ՝ զոհս՝ զզոհս. Տ. զոհուել, 'ի զենլեաց.
զոչ գոյն գոյացուցանել. Տ. չգոյն.
զորսականս ձկանց որսալ. ձկնորսութիւն ընել.
զուարթութեամբ արթուն կալ. Տ. արթուն, զարթնուլ.
զուարճութեամբ զուարճանալ
զուր ինչ զրպարտ լինել
զուրախարարն ուրախ առնել
զչարագործն գործել. չարագործութիւն ընել. Տ. չգործ.
զչարել ընդ չար բանն
զչգոյն ի գոյ ածել. Տ. գոյացուցանել, զանգոյսն, զանէնչսն, զոչ գոյն, ի չգոյէ, յոչնչէ.
զչգոյն ի գոյութիւն ածել. » » » »
զչէն ի յէ կոչել » » » »
զչէն յէ դարձուցանել. » » » »
զպատերազմ բարւոք պատերազմել. Տ. զբարւոք մարտնչել.
զպսակաւորն պսակել

զտեղէ առնալ ետեղանամ. Տ. զետեղիմ.
զտեղի առնալ զետեղիմ. » զետեղեմ.
զրկիմ զրկանս. զրկանք քաշել.
զփառաւորիչս փառաւորեմ
զօղեմ յօղեմ. խառնել հետ միացրնել.
զօրամողով լինիմ զօրօք. զորք ժողվել. Տ. ժողովեմ.
զօրահատոյց առնեմ զզօրս. » » » »
զօրանամ զօրութեամբ՝ 'ի զօրութեան. Տ. զօրութեամբ, հզօրանամ.
զօրանամ զօրութեամբք. » » »
զօրաչար ժամաչար պարտ չարեացն գնեմ. չար օրուան ու ժամուան դէ-
տագրել չարիք.
զօրացուցանեմ զանզօրս մեծազօր զօրութեամբ
զօրացուցանեմ զօրութիւնս
զօրաւոր եմ և այլ զօրութեան. Տ. ուժաւոր.
զօրութեամբ զօրանամ ըստ զօրութեան. Տ. զօրանամ.
Ըղձանամ զանըղձալիսն
ըղձիւք ըղձանամ. Տ. տենչամ, ցանկամ.
ըղձութիւնս ըղձանամ. Տ. դիւթեմ, թովչութիւնս, կախարդեմ, հաւ-
ցուկս, հմայեմ, յուռութս.
ըմբռնեմ զանըմբռնելին. Տ. յանձնան.
ըմբռնեմ զըմբռնիչն
ըմբռնիմ 'ի բռնակալութենէ. Տ. 'ի բռնաւորէ.
ըմպելի ըմպեմ
ըմպեմ զըմպելի
ընդ ամենայն՝ ամենայն ինչ լինիմ. ամենուն հետ ամեն բան ըլլալ.
ընդ ամենայնի՝ ամենայն լինիմ. » » » » »
ընդ անխրատութեան ընդելացուցանեմ. անկրթութեան վարժեցընել.
ընդ անօրէնս անօրէն լինիմ
ընդ առն անբծի անբիծ լինիմ. Տ. ընդ սրբոյն.
ընդ բեւեռս բեւեռիմ. Տ. բեւեռօքն.
ընդ ելսն ելանեմ. աստիճաններէն վեր ելնել.
ընդ ընտրելոյն ընտրեալ լինիմ
ընդ թիւրելոյն թիւրիմ. Տ. թիւրեցելոյն.
ընդ խաբս խաբիմ. չգիտնալով խաբուիլ.
ընդ խաչեալն խաչիմ. Տ. խաչեցելոյն.
ընդ կապեալսն կապիմ. Տ. կապիմ.
ընդ հակառակսն հակառակիմ. Տ. ընդդիմադիրն.
ընդ ձայնելի ձայնիմ
ընդ մարտիկսն մարտնչիմ
ընդ նոյն ընդելնում. նոյն բանին վարժուիլ.

ընդ որոյն սուրբ լինիմ. Տ. ընդ առն.
ընդ տկարս տկար լինիմ
ընդ տրտմեալսն տրտմակից լինիմ. Տ. տրտմակից.
ընդդիմաբանեմ եւ. ընդդէմ կամ
ընդդիմակին ընդդիմանամ. Տ. ընդ հակառակսն.
ընդելանիմ ընդելուզանեմ. ջանք ընելով աշխատիլ.
ընդելուզանեմ ընդելուզածս. Տ. անկանեմ, գործ անկուածոյ, հիւսեմ.
ընթանամ զառաքինութեան ընթացս. Տ. առաքինանամ, զերկնից.
ընթանամ զընթացս. Տ. գնամ, ընթանամ, ըստ գնացից.
ընթացս ընթանամ. » » » » »
ընձեռեմ զձեռն. ձեռքն ուրիշի մը ձեռքը տալ.
ընչաթափ լինիմ յընչից. կողոպտուիլ.
ընչից յղփութեամբ յղփանամ. շատ հարստանալ. Տ. մեծանամ.
ընտրեմ զընտիր ընտիր զօրացն
ընտրեմ զընտրեալսն
ըստ բազմաց բազմացուցանեմ
ըստ բանակաց բանակիմ
ըստ գնացից գնամ. Տ. գնամ, ընթանամ.
ըստ թուոց թուեմ. Տ. թուեմ, համարեմ.
ըստ հատուցմանն հատուցանեմ. Տ. հատուցանեմ.
ըստ սակաւուց սակաւացուցանեմ
թագապատճոյճ առնեմ զթագաւորն
թագաւորեմ թագաւոր՝ ՚ի թագաւոր
թագաւորեմ ի թագաւորութիւն՝ զթագաւորութիւն՝ ՚ի թագաւորութեան
թագաւորեցուցանեմ թագաւոր՝ ի թագաւոր
թաղեմ զթաղումն իշոյ. անթաղ մնալ. Տ. քարշեմ.
թանձրացուցանեմ ՚ի թանձրութիւն՝ ՚ի թանձրութիւնս
թարգմանեմ զանթարգմանելին
թարգմանեմ զմի թարգմանութիւն
թարգմանեմ զմիանգամ թարգմանեալսն
թափանցանց անցանեմ. թափանցել.
թաքչիմ ի թաքստեան
թեթեւացուցանեմ զթեւս
թեւաթռուսիմ թեւօք
թեւակոխ թեւամուխ լինիմ. ձեռազանցել, ջանալ.
թեւօք թեւակոխեմ. » »
թեւովք թեթեւանամ
թեւօք թեւանամ. թեւաւորիլ.
թիւրեցելոյն լինիմ թիւրակից

թլփատեմ զանթլփատութիւն
թլփատեմ զանթլփատս
թլփատիմ անթլփատութեամբ
թլփատիմ 'ի թլփատութիւն՝ 'ի թլփատութեան
թշնամանեմ զթշնամանողս
թշնամանեմ թշնամանօք
թշնամի լինիմ թշնամեաց. Տ. հակառակ կամ.
թշուառութեամբ թշուառանամ
թովչութեամբ թովեմ. Տ. դիւթեմ. ըղձութիւնս, կախար-
դեմ, հարցուկս, հմայեմ. յուռութս.
թովչութիւնս թովեմ. » » »
թուեմ զթիւս. Տ. ըստ թուոյ համարիմ.
թուով թուեմ. » » » »
թուիմ ի թիւ
թռչիմ ի թռիչս
ժամ առնել ժամադիր լինիմ. ժամադիր ըլլալ.
ժամանակեմ ժամանակ. » »
ժամանակիմ 'ի ժամադրութիւն. » »
ժամէ 'ի ժամ առնեմ զժամանակ. Տ. ամ. օր.
ժառանգեմ զժառանգիչս
ժառանգեմ ժառանգութիւն՝ զժառանգութիւն
ժառանգեցուցանեմ ժառանգութիւն. ժառանգ ընել.
» զժառանգութիւնս. » »
» 'ի ժառանգութենէ. » »
ժողովեմ զժողովուրդն՝ ժողովուրդս՝ զժողովուրդս
ժողովեմ զժողովս զօրացն. Տ. զօրաժողով.
ժողովեմ զժողովս ժողովրդեան
ժողովեմ ժողովս՝ զժողովս
ժողովեմ ժողովս ժողովս. Տ. գումարիմ.
ժողովեմ 'ի ժողով՝ 'ի ժողովս. »
ժողովիմ 'ի ժողովուրդ. »
'ի բանտի եմ ընդ բանտարկեալսն
'ի բարեկենդանութեան եւ 'ի բարօրութեան լինիմ
'ի բռնաւորէ ըմբռնիմ. Տ. ըմբռնիմ.
'ի գիրս նշանագրեմ. » գրեմ 'ի գիրս.
'ի գովելն գովեմ
ի դատաստանի դատապարտիմ
'ի զենլեաց զենում. Տ. զենում, զոհ.
'ի թարգմանաց թարգմանիմ

ի թաւալ բանից թաւալիմ. khorpiü khoufler ըսեն. Տ. յանցողութ.
'ի լոյս՝ 'ի լուսոյ լուսաւորիմ. Տ. լուսով.
'ի լուծ լծեմ. Տ. լծիմ.
'ի լուր ականջաց լսեմ. Տ. լսելեօք, յականջալութ.
» ունկան լսեմ. » » »
'ի խափանմանէ խափանումն լինիմ
'ի ծնէ կոյր ծնանիմ
'ի կայի կացուցանեմ. hiausias kécilen. Տ. հաստատեմ.
'ի կարծիսն կարծեօք կարծեալ եմ. » կարծեա, յեղակարծ.
'ի կեղծիս կեղծաւորիմ. Տ. կեղծաւորանամ.
'ի կիր կրեմ. bèn salin.
'ի կոյր կեանս կուրասաեղծեալ լինիմ
ի կոր կորանամ. Տ. գլխիվայր.
'ի հարեւանցի անցանեմ. Տ. անց եւ անց, հարեւանցի.
'ի ձայն աղէ եւ ողորմ աշխարանաց աշխարեմ. Տ. աշխարանօք, կոծեմ, ողբամ.
'ի ճակատագրին գրեմ
'ի մանու մանանամ. ileulin.
'ի մարմնի անմարմնանամ
'ի մի հաւատս հաւատոյ հաւատամ. Տ. հաւատամ.
'ի մի միաբանութիւն ածեմ.
'ի մի վայր միաժողով լինիմ. ikilsiedin.
'ի միաձայնս միաբանեալ գանիմ. hamahaïsélin.
'ի միասին միաբան լինիմ. Տ. միաբան.
'ի յայտնեայն զանյայտն յայտնի առնեմ. Տ. ճանաչեմ.
'ի նոյն ժամանակի ժամանակաւորիմ. ouç haalin.
'ի չափոյ չափիմ
'ի չափու կեանս կեամ. չափաւոր կեալ անցընել.
'ի չգոյէ գամ 'ի գոյ. ustedoulin.
'ի չգոյէ գոյացուցանեմ. Տ. զանգոյն, զանիմչսն, զչէն, յոչնչէ.
'ի չգոյէ 'ի գոյ ածեմ. » » » » »
'ի չգոյութենէ 'ի գոյ ածեմ. » » » »
'ի պատիւ փառաց փառաւորիմ. Տ. փառօք.
'ի պէտս անպէտ կամ. pitsalin չըլլալ.
'ի սկզբանց սկիզբն արարեալ սկսանիմ. Տ. սկզբմամբ.
'ի վաճառափողոցի վաճառեմ. Տ. վաճառեմ.
'ի վայելս վայելեմ. » վայելեմ.
'ի վայր վայրեմ. վար թափել.
'ի վարժարանի վարժիմ 'ի հրահանգս վարժից

՚ի վեր վերանամ. Տ. բարձրանամ, համբառնամ, վերանամ,
՚ի վերն եմ եւ վերագոյն. » » »
՚ի վերնախորանս վերանամ. » » »
՚ի տապոյ տապանամ. Տ. տապանամ.
՚ի տեղւոջն զետեղիմ. Տ. զտեղի.
՚ի տեսլեանն տեսիլ տեսանեմ. Տ. տեսիլ.
՚ի ցնորս ցնորիմ. Տ. ցնորս.
իմանամ եւ իմացուցանեմ
իմանամ զիմաստութիւն
իմանամ իմաստս
իմաստնացուցանեմ զիմաստունս
» իմաստութեամբ
ինքնագործ լինիմ ՚ի պատարագագործութեան. Տ. պատարագեմ.
ինքնակամս կամիմ. Տ. կամաւոր, կամիմ.
ինքնատես ինքնալոյր լինիմ. աչքովը տեսնել եւ ականջովը լսել.
իջանեմ եւ զիջանիմ
իջանեմ ըստ զիջանելոյ
իրագէտ իրացն եմ. լաւ տեղեկութիւն ունենալ.
իրագէտ լինիմ իրաց. » »
իրազգած լինիմ իրացն. » »
իրաւացուցանեմ իրաւունս. Տ. զիրաւունս.
իւղաթիլեմ զիւղաթլութիւնն. գլուխն օծել. Տ. օծանեմ.
իւղաթլեմ իւղաթլութեամբ. օծուիլ.
իւղաթլուս լինիմ իւղաթլութեամբ. »
Լալիւն՝ լալիւնս լամ. Տ. արտասուալից, զլալ.
լամ ի լալիւն մեծ. » » »
լամ իբրեւ զլալիւն. » » »
լամ լալիւն մեծ յոյժ. » » »
լամ ընդ լացողս
լարաբաժին բաժանեմ
լացուցանեմ իբրեւ զլալիւն
լկեմ չարճլուկ. Տ. կտուտ, յուզիւքն, չարագան.
լծեմ դնեմ ՚ի լուծ. Տ. ՚ի լուծ.
լծեմ ընդ լծով. » » »
լնուլ լրութեամբ. լեփ լեցուն լնել. Տ. կատարեմ.
լուանամ զլուացումն
լուծանեմ թոյլ լուծութեամբ
լուսաւոր առնեմ զլոյս
լուսաւորեմ զլոյս՝ լուսով
լուսաւորիմ լուսաւորութեամբ

լուսով լուսաւորեմ. Տ. 'ի լոյս.
լպրշութիւն լպրշիմ. անէրեսնալ. Տ. լրբութեամբ.
լռելեօք լսեմ. Տ. 'ի լուր. յականջալուրս.
լսեմ ծայրիւք լսելեաց. » »
լողութեամբ լսեմ. » »
լսեմ լուր՝ զլուր
լրբեմ զբարուք լրբութիւնն
լրբութեամբ լրբիմ. Տ. լպրշութիւն.
լրտեսութեամբ լրտեսեմ
Խաբեմ զանխաբելին
խաղ առնեմ զխաղոյսն. ծանրակշիռ բաները ծաղրել.
խաղ խաղամ
խաղաղանամ զճշմարիտ խաղաղութիւն
խաղամ խաղս
խաչելոյն խաչակցիմ. Տ. ընդ խաչեալն.
խառնակեմ զանխառն
խառնակիմ զիգական խառնակութիւնս
խառնեմ առնեմ միախառն. բարեխառնել.
խառնեմ զխառնակութիւն
խառնեմ 'ի խառնարան՝ 'ի խառնարանս բաժակաց մէջ լեցնել.
խառնեմ ի խառնելիս. » » »
» ի խառնս. Տ. յօտարախառնս.
» խառնելիս ըմպելեաց. բախտի համար բաժակ խմել.
» նոր խառնմամբ
խառն ի խուռն խառնեմ
խառնուածով խառնեմ
խարդախութեամբ խարդախեմ
խաւարաւ խաւարիմ. Տ. մթով.
խափանեմ զխափանած
խելամտութեամբ խելամուտ լինիմ
խեղութեամբ խեղեմ
խլեմ արմատախիլ
խմբեմ զխումբս՝ խումբս դաւաճանել. Տ. գումարեմ.
խմորեմ խմորով
խնամովք խնամ ածեմ. Տ. հոգաբարձութեամբ.
խնդամ զխնդութիւն. Տ. ուրախ լինիմ, ցնծամ.
» ի վերայ խնդութեան. » » »
» խնդութեամբ. » » »
» մեծ խնդութիւն. » » »
խնդամ ընդ խնդացողս